

Պուք միայն տիրապատուէրն հրամանաց հաւատարիմ՝
 Բան զոր զեղեմ աղբերօք ընկալայք՝ յուշ ձեզ անմոռաց
 Եւ թէ ինչ ՚ի լոկոյ վերապատուեալ ըզմարդ իշխան
 Եւ յընդ անձինն պահապետք՝ զկեանսրդ նրմին գրնէք վահան,
 Ի ձերդ յաճախ կորուստենէ նրմին ըզշունչ առձեռելով .
 Կորուստ վըսեմական, բանականին ՚ի բնուստ արժան ,
 Ի զսէր մըտերմութեան ընդ մահ անշուշտ բերեալ կըշիւ .

Ո՞ր զայդ ՚ի սիրտ սերմնն ձեզ արկ դիւրապատրաստ հըլութիւն .
 Ի՞նչ ըզյուշ , կամ ո՞ր դարձեալ զիմացութիւն ըբանչելի
 Իրով դուք քան զկենդանեաց գրէք սեռովք համագոյից
 Իրչափ ընդ ձեզ և ընդ մարդ խտրոց անկեալ անջրայետիչ .
 Եւ առ մերս առաւել հակելով ձեր կշուոց նրժար .
 Իրպէս զի թէ ցուրտ աչօք և ցըրտագոյն ՚ի սիրտ անբանք
 Եւ թէ յօգըն ձեռնտու՝ այլ մահազէնս շարժեն մարդկան ,
 Կամ ՚ի վեհ գործոցդ ՚ի զին անկարեկիր կան հայեցիւք ,
 Իայց դուք , հրաշք անձառ , ընդ մարդ բերէք նախանձ հըզօր
 Ի վեհագոյնն իսկ նորուն՝ ակն ՚ի սիրոյն տըւեալ հանդէս .
 Ի՞նչ ըզվատաց անկուշիւով մարդոց ըզհեշտ սէր անձնահաճ ,
 Կորուն իսկ յըմբերանել և պատկառանքս ինքնադատ
 Եւ յնց և եթ աշակերտէք որ սառնապատ նդ երես լերանց
 Ի զսիրոյն ջերմնահալ գնացուցանեն սրտին շնչմունս ,
 Եւ յաջոյն աստուածասաստ մեղկելով շանթըս ցըտակէզ
 Պաշտօնեայք արժանաւորք՝ մարմնաւորեն նորուն ըզտիպ .
 Եւ դուք սոցա սատարողք վըշտացն ՚ի վտանգ հաւասարողդ ,
 Պուք դարձեալ և պարծանացն իրաւապէս գոյք մասնակից .
 Եւ ուր նոցուն մարդասէր թուչին փառօք անուանց համբաւ
 Եւ ձերդ անմեկինք , իբր արձագանգք առ ՚ի ձայնէ՝
 Պատուեսցին շորհապարտ ՚ի սիրտ , ՚ի շուրթն և ՚ի քարտէզ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՃԱՏՏԱՐՈՒԹԻՒՆ

Բ . Կենդանիները յօշերուն կերպը :

Ս՚ի և նոյն կերպով յօշելու է գրե-
 թէ ամէն կենդանիները՝ թէ՛ բնական
 հիւանդութեամբ և թէ՛ բռնի մեռած
 ըլլան . և շատ քիչ են անոնք որոնց յօ-
 շումը կը տարբերի : Եւ իսկ և առաջ ըստ
 կարելոյն արմատէն պէտք է կտրել
 վրանին գտնուած ստեւները կամ մազե-
 րը . և թէ որ ոտքերնին պայտ ունի՝
 հանելու է : Ետքը կ'առնես կրունկի
 վրայ կը պահկեցընես՝ գետնի կամ սե-
 ղանատախտակի մը վրայ . և սուր դանա-
 կով մը կենդանւոյն վարի ծամելիքին
 մէջտեղէն ուղիղ գծով փորին երեսին

կը ձեղքես մինչև պուշը՝ բոլոր կաշիին
 թանձրութիւնը քիչ մ'ալ աւելի թափանցե-
 լով ինչուան միւր . նոյնպէս չորս պուտե-
 ռուն մորթը կը ձեղքես դէպ ՚ի երկայնքը
 ինչուան ոտուրներուն ծայրը . այնպէս որ
 առջի ձեղքին հետ ուղիղ անկիւն կը
 ձեւացընեն . իսկ ոտուրներուն ծայրերը
 շրջապատելով՝ նոյն ձեղքը կը լմնցընես :
 Եւ ատենը փորին վրայի ձգքուած-
 քէն սկսելով կաշիին եզերքէն բռնած՝
 սկրդէ՛ դանակով մին վրայէն հետզհե-
 տէ փորը , լանջքը , պարանոցը , սրուն-
 քները : Ի՞նչ որ կենդանին նիհար ըլ-
 լայ , և կամ դուն վարժ ըլլաս՝ պէտք է
 նայիլ որ դանակին բերանը աւելի դէպ
 ՚ի մին քան թէ մորթին ուղղես՝ կա-
 շիին վրայ մսի կտորուանք ձգելով , որ-
 պէսզի ըլլայ թէ յանկարծ գտնուելովդ՝

կաշին ճղքրտելով անպիտանացրնես :
 Բոլոր այս վերի յիշած մասունքները լաւ մը Գերեւելէք ետե՛ կենդանին փորու վրայ դարձուր որ գործողութիւն կարենաս ընցընել : Բայց գարձուցած՝ նախ պոչը բոլորովին սկրդելով, ներքին ոսկրուտ ու մանուտ մասը արմատէն հեռու կը կտրես ,ետքէն գործոծողութիւնդ առաջ տանելով բոլոր կրունակն ալ կը սկրդես , երբ գլուխն որ հասնիս՝ ականջները իրենց արմատէն կտրէ հանէ , ու գլխոյն յետին մասն ալ մերկացընելովդ՝ գործքդ կը ընննայ

Ի՞նչ որ տեղիդ մօտ խաղախորդ կամ կաշեգործներ որ գտնուին՝ որպէս զի մէկէն նոր քերթած կաշին ծախես , կրնաս բոլոր պոչը ամբողջ կաշին վրայ թողուլ , նոյնպէս ալ ականջներն ու շրթունքները վրան թողուլ՝ որ չըլլայ թէ մորթեւերծելու ժամանակդ՝ յանկարծ մնաս մը հասցընես : Բորթեւերծարուեստաւորները այս բանս կամաւ կ'ընեն , որպէս զի աւելի ծանր կռէ կաշին , որովհետեւ կշիւքով կը ծախուի :

Բսած կերպովնիս կենդանին մերկացընելէդ ետե՛ հանէ բոլոր ընդերքը , կուրծքի աղիքներն , ու մօտիկ տեղ մը դիր . ու չորս ստուրներուն երկայն ջիղերը վրաններնէն հանէ ու ետքը ոսկրները յօդուածներէն բաժնէ : Երջէն վերի սրունքներուն յօդուածներն ալ կտրելու ատենդ , նայէ որ ջղերը ձեռքէդ եկածին չափ խոր արմատներնէն փրցընես , որ լստ կարի երկայն մնան . աս ալ ընելէդ ետե՛ սկսէ վրայի միսերը կտրտել հանել , զատելով այն կրտորները որ կրնան սնունդ ըլլալ : Կողերուն մէջէն , պոչին ողնաշարէն , ու գլխուն վրայէն հանուած միսերը պզտի կտորուանք կամ քերթածոյ բաներ կ'ըլլան : Իսկ ոսկրները բոլորովին մաւկան մասունքներէ մաքրելու համար ուրիշ յօդուածի մէջ պիտի խօսինք :

Ճարպը հանելու հերպը . Կենդանիդ յօշելու ատենդ՝ պէտք է մին վրայի ճարպերը գատել , որ աւելի կ'ըլլան սրբտին ու ընդերայ քովերը , որովայնամաշկին ու ստորին որովայնին ներքին կող-

մերուն մօտերը , միջընդերայ , լանջաթաղանթին թանձրութեանը մէջ , ու թանձր մներուն մէջ . աս յետինին մէջէն շատ դժուարին է ճարպահանուիլ , ու ճարտար ձեռաց կարօտ որ ճարպկութեամբ մը կարենայ ճարպերը մներէն զատել : Ենք ուզեր հոս խօսքերնիս երկնցընել՝ ճարպի վրայ արդէն Բազմավիպիս Բ . Հատ . 264 էջին ու Գ . Հատ . 71 էջին մէջ խօսուած ըլլալով , և ոչ իսկ գործածուեցը վրայ , որ առանձին խօսելու նիւթեր են :

Չղերու հանելու հերպը և գործածութիւնը . Չղերը մարմնոյն այն մասունքն են որ միսերը ոսկրներուն հետ և ոսկրները իրարու հետ կը կապեն : Չղերը աւելի դիւրաւ կը հանուին անդամոց ծայրերէն ուր որ են իրենց ծայրերն ալ : Օտոնք հանելու համար պէտք է միուէ կի՛ կապանաց կէտին վրայէն կրտրել , այնպէս որ դանակիդ բերանը ջղերուն ծայրերը , ոսկրոց ծայրերէն բաժնէ , մէկտեղ առնելով այն մորթի պզտի կտորներն ալ որ ոտքին կպած կը մնան :

Բնդհանրապէս ջղերը կը գործածուին երբոր երկար ըլլան՝ թըջելով չուանի տեղ պլէլով փայտի ծայրերը իրարու կապելու , որ խիստ ամուր կը բանեն : Իսկ երբ չոր ըլլան ու որ և իցէ երկայնութեամբ՝ սոսնձավաճառներու կը ծախուի . և կամ տաք ջրի մէջ եփելով՝ որուն սառնանման եփած ջուրը կրնաս գետնախնձորի հետ խառնել , կամ թփի հետ որ և իցէ խոզերու տալու կերակուրներու հետ , որ խիստ սննդարար ու զիրացուցիչ կերակուր կ'ըլլայ կենդանեաց , մանաւանդ խոզերուն :

Բնդհանրապէս և սննդներն ոսկրէն զատելու հերպը : Հատ տեսակ կերպերով կրնաս ոտքի ոսկրներէն այն եղջերային նիւթը գատել բայց ամենէն պարզ կերպը ատ է . ան այս մասունքը ու ջրի մէջ դիր . և թող մինչև որ ներքին ոսկրին ու ընդգացը մէջը եղած կակուղ ու մանուտ գոյացուածիւնը լաւ մը լըխկի ու գրեթէ լուծուի . այն ատեն դանակով մը ոսկրին ու ըզունգին իրարու կպած տեղէն դիւրաւ կրնաս բաժնել :